

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Բնակչության բժշկական օգնության եւ սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի (Կ-331-29.10.2019-ԱՍ-011/0) նախնական քննարկման համար ներկայացված առաջարկությունների

| ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ | ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ | ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ | ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ |
|--|--|--|--|--|
| Աժ պատգամավորներ Կարինե Պողոսյան Զանիբեկ Հայրապետյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱՍ-011/0) | Օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Հեռաբժշկության միջոցով խորհրդատվություն տրամադրող կազմակերպության կողմից իրականացված բժշկական օգնության ցուցաբերումը, որն իրականացվում է բուժող բժշկի, պացիենտի և հեռաբժշկության միջոցով խորհրդատվություն տրամադրող բժշկի միջև, կրում է խորհրդատվական բնույթ և պացիենտի առողջական վիճակի վերաբերյալ պատասխանատվությունը կրում է այն բժիշկը, ում գործողության հետևանքով տեղի է ունեցել պացիենտի առողջական վիճակի փոփոխություն:»: | Չի ընդունվել: Նախագծում տրվել է առավել հստակ ձևակերպում՝ «պացիենտի առողջական վիճակի վերաբերյալ պատասխանատվությունը կրում է խորհրդատվություն ստացող կազմակերպության բուժող բժիշկը»: Ի վերջո բուժող բժիշկն է որոշում կայացնում ընդունել «հեռաբժշկության միջոցով խորհրդատվություն տրամադրող կազմակերպության կողմից իրականացված բժշկական օգնության ցուցաբերումը», թե ոչ, հետևաբար իր իսկ (բուժող բժշկի) կողմից իրականացված գործողությունների արդյունքում «պացիենտի առողջական վիճակի վերաբերյալ պատասխանատվությունը» կրում է բուժող բժիշկը: | Ընդունվել է: |

| | | | | |
|---|---|---|---|---------------------|
| <p>ԱԺ պատգամավորներ Կարինե Պողոսյան Զանիբեկ Հայրապետյան</p> | <p>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ- 331-29.10.2019-ԱՍ- 011/0)</p> | <p>2. Օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 17-րդ կետում «վերաբերյալ» բառից հետո լրացնել «հանրամատչելի» բառը:</p> | <p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:</p> | <p>Ընդունվել է:</p> |
| <p>ԱԺ պատգամավորներ Կարինե Պողոսյան Զանիբեկ Հայրապետյան</p> | <p>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ- 331-29.10.2019-ԱՍ- 011/0)</p> | <p>3. Օրենքի նախագծի 6-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «7. Օրենքով նախատեսված անձնական տվյալներ տնօրինող պետական մարմինները, առանց անձի համաձայնության՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած կարգով, կարող են այդ տվյալները փոխանակել արտակարգ իրավիճակներում կանխարգելիչ միջոցառումներ, այդ թվում՝ բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպելու և իրականացնելու նպատակներով: Կենդանիների և մարդու համար ընդհանուր, շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների արձանագրման համար անձնական տվյալները կարող են փոխանցվել բացառապես անձի համաձայնությամբ:»:</p> | <p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:</p> | <p>Ընդունվել է:</p> |
| <p>Ն. Զեյնալյան</p> | <p>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ- 331-29.10.2019-ԱՍ- 011/0)</p> | <p>Առաջարկվում է օրենքի նախագիծը ներկայացնել ոչ թե նախատեսելով փոփոխություն գործող օրենքի, այլ, որպես նոր օրենքի նախագիծ անցումային դրույթներով ուժը կորցրած ճանաչելով գործող օրենքը: Այս նախագծով ըստ էության առաջարկվում է նոր օրենք, գործող օրենքը առաջարկվում է լրացնել 20-ից ավելի հոդվածներով: Առաջարկը հիմնավորվում է նաև <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով:</p> | <p>Ընդունվել է ի գիտություն: Նախագիծը ներկայացված է նոր խմբագրությամբ, քանի որ վերջինիս մեջ կատարվող փոփոխություններն ու լրացումները ծավալուն են:</p> | <p>Ընդունվել է:</p> |

| | | | | |
|--------------|--|--|---|---------------------|
| | | | | |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱՍ-011/0) | <p>Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասը՝ համաձայն որի՝ անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը պետք է սահմանվի օրենքով, ինչպես նաև պետք է ֆիքսվեն ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 7-րդ, 8-րդ և 10-րդ մասերով սահմանված նպատակներին հասնելու օրենսդրական կարգավորումները, որի շրջանակներում հստակ պետք է կանոնակարգվեն ու տարանջատվեն ՀՀ կառավարության, առողջապահության բնագավառի լիազոր մարմնի, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների և պարտականությունների շրջանակը:</p> <p>Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է Օրենքի նախագիծը լրացնել համապատասխան կարգավորումներով:</p> <p>Համաձայն ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 2-րդ մասի Օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը:</p> <p>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծով չի կատարվում ՀՀ սահմանադրության պահանջը: Անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը պետք է սահմանվի օրենքով, այլ ոչ թե ՀՀ կառավարության կամ ՀՀ առողջապահության բնագավառի պետական կառավարման մարմնի կողմից, ինչը փիքսված է նաև նախագծի 41-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասում, որոնք ըստ էության հակասում են Սահմանադրությանը: ՀՀ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, վերջինիս նորմերը ենթակա են պարտադիր կատարման բոլորի կողմից, իրավաստեղծ, իրավակիրառ գործունեության համար ունի հիմնարար նշանակություն:</p> | <p>Չի ընդունվել: Անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը ծավալային առումով օրենքով կարգավորելը անիրատեսական է, ինչը տարբեր մակարդակներով քննարկման առարկա է դարձել և հարցի կարգավորում տարբերակ դիտարկվել է Սահմանադրության համապատասխան հոդվածի փոփոխությունը:</p> | <p>Ընդունվել է:</p> |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության | <p>Նախագծում առկա չեն առանցքային կարգավորումներ, որոնք կիրառելի կլինեն առողջության համապարփակ բժշկական ապահովագրություն պայմաններում:</p> <p>Քանի որ, առաջիկայում նախատեսվում է ներդնել առողջության համապարփակ բժշկական ապահովագրություն, անհրաժեշտ է</p> | <p>Ընդունվել է ի գիտություն: Առողջության համապարփակ բժշկական ապահովագրության վերաբերյալ</p> | <p>Ընդունվել է:</p> |

| | | | | |
|---------------------|---|---|---|---------------------|
| | <p>օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0)</p> | <p>նախագիծը կազմել բժշկական ապահովագրության տրամաբանության համապատասխան և դրա վերաբերյալ առանձնացնել հստակ կարգավորումներ:</p> | <p>կարգավորումները պետք է սահմանվեն առանձին օրենքով, ինչը որպես առանձին միջոցառում նախատեսված է Կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի 650-Լ որոշման 28.1 կետով, այն է՝ «Առողջության համապարփակ բժշկական ապահովագրության մասին» օրենքի նախագիծը վարչապետի աշխատակազմ ներկայացնելը, որի համար ժամկետ է սահմանված 2020 թվականի նոյեմբերի 2-րդ տասնօրյակը:</p> | |
| <p>Ն. Ջեյնալյան</p> | <p>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0)</p> | <p>Նախագծում, տարբեր հոդվածներում մի շարք հասկացություններ օգտագործված են հոմանիշներով կամ համանման հասկացությամբ այլ բառով: Օրինակ՝ անոթիչ և պալախտիվ, բացի և բացառությամբ և այլն:</p> | <p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:</p> | <p>Ընդունվել է:</p> |
| <p>Ն. Ջեյնալյան</p> | <p>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0)</p> | <p>Նախագծի մի շարք հոդվածներում «պետական կառավարման մարմնի ղեկավար» բառերը փոխարինել «պետական կառավարման լիազոր մարմին» բառերով:</p> | <p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:</p> | <p>Ընդունվել է:</p> |

| | | | | |
|--------------|--|---|---|--------------|
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Նախագծի հիմնական հասկացությունների մեջ առանձնացված չեն կանխարգելում, ախտորոշում, բժշկական զննություն, առողջություն, հիվանդություն, պալիատիվ բժշկական օգնություն, բժշկական գաղտնիք, որակի կառավարում, ավագ, միջին, կրտսեր բուժաշխատող, պալիատիվ (ամոքիչ) բժշկական օգնություն և այլ հասկացությունները, որոնք առկա են նախագծում: Առաջարկվում է բոլոր այդ հասկացությունները առանձին ձևակերպել: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Առաջարկվում է նախագծում ավելացնել մասնագիտական կադրային ներուժի և դրա պլանավորմանն առնչվող հոդվածներ: Մարդկային ներուժի հստակ պլանավորումը արդյունավետ բժշկական օգնություն և սպասարկում իրականացման, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման համաչափ զարգացման կարևորագույն նախապայման է: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է /հոդված 34/: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Նախագծում առկա «պետական կառավարման մարմնի ղեկավար» արտահայտությունը փոխարինել «պետական կառավարման լիազոր մարմին» արտահայտությամբ: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում | Նախագծի 2-րդ հոդվածի, 1-ին մասի 1-ին կետով սահմանվում է. «Բժշկական օգնություն եւ սպասարկում բնակչությանը խորհրդատվական, կանխարգելիչ, բուժական, ամոքիչ, դեղորայքային օգնության ցուցաբերում, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացում, | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է. «այլ» բառը հանվել է: Միաժամանակ, խմբագրվել է «հարբժշկական ծառայություններ» հասկացությունը: Ինչ | Ընդունվել է: |

| | | | | |
|---------------------|---|--|---|---------------------|
| | <p>փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱՍ-011/0)</p> | <p>հարբժշկական եւ ոչ բուժական բնույթի այլ ծառայությունների մատուցում»: Նույն հոդվածի 45-րդ կետը սահմանում է. «հարբժշկական ծառայություն՝ բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնողների կողմից բժշկական ծառայություններին զուգահեռ մատուցվող ոչ բժշկական բնույթի ծառայություններ», ինչն ըստ էության նույնացնում է հարբժշկական և ոչ բժշկական ծառայությունները, թեև ելնելով 1-ին կետի տրամաբանությունից դրանք տարբեր են: Առաջարկվում է վերոհիշյալ կետից «այլ» բառը հանել, այլապես ստացվում է, որ խորհրդատվական, կանխարգելիչ, բուժական, ամոքիչ, դեղորայքային օգնության ցուցաբերումը, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացումը համարվում են հարբժշկական եւ ոչ բուժական բնույթի ծառայություններ: Անհրաժեշտ է հարբժշկական եւ ոչ բուժական բնույթի ծառայություններ հասկացությունները հստակեցնել: Վերոնշյալ կարգավորման գործնական կարևորությունը կայանում է նրանում, որ քաղաքացիներին, այդ թվում նաև պետական պատվերի շրջանակներում վճարովի հիմունքներով մատուցվում է հարբժշկական և ոչ բժշկական ծառայություններ, ուստի դրանց հստակ սահմանումը կարևոր է վերջինների անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունքի լիարժեք իրականացումն ապահովելու համար:</p> | <p>վերաբերում է ոչ բուժական բնույթի այլ ծառայություններին, ապա այդպիսիք են օրինակ, լրացուցիչ հարմարություններով հիվանդասենյակի, սննդի տրամադրումը, լոգանքի ծառայությունները և այլն:</p> | |
| <p>Ն. Ջեյնալյան</p> | <p>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱՍ-011/0)</p> | <p>Հարբժշկական և ոչ բժշկական ծառայությունները բժշկական օգնության և սպասարկման մեջ ներառելը, համաձայն Նախագծի Հոդված 2-ի 1-ին մասի 4-րդ կետի, կարող է դիտարկվել որպես լիցենզավորվող գործունեություն, ինչը ևս պարզաբանման կարիք ունի:</p> | <p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:</p> | <p>Ընդունվել է:</p> |
| <p>Ն. Ջեյնալյան</p> | <p>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության</p> | <p>Նախագծի 2-րդ հոդվածի, 1-ին մասի 7-րդ կետում. («Բժշկական միջամտություն՝ գործողություն, որն իրականացվում է բուժաշխատողի կողմից պացիենտի հետ՝ առողջությունը, դրա որոշակի բաղադրիչը կամ ախտաբանական վիճակը գնահատելու, բարելավելու, փոփոխելու նպատակով»)</p> | <p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:</p> | <p>Ընդունվել է:</p> |

| | | | | |
|---------------------|---|---|---|---------------------|
| | <p>օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱՍ-011/0)</p> | <p>անհասկանալի են «առողջություն որոշակի բաղադրիչ» հասկացությունը և «փոփոխելու» բառը: Վերջինիս կիրառումը ենթադրում է, որ բժշկական միջամտությունը գործողություն է, որն ուղղված է առողջության վատթարացմանը: Առաջարկվում է կետից հանել «դրա որոշակի բաղադրիչը» և «փոփոխելու» բառերը:</p> | | |
| <p>Ն. Ջեյնալյան</p> | <p>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱՍ-011/0)</p> | <p>Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով տրված է «Կոնտակտային անձ»-ի սահմանումը, որը համաձայն նախագծի կարող է լինել պացիենտի կողմից ընտրված ցանկացած չափահաս, գործունակ անձ, որը չունի որևէ ազգակցական կապ պացիենտի հետ, որին համաձայն Նախագծի 9-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության կարող են փոխանցվել բժշկական գաղտնիք համարվող տվյալները, ընդ որում 7-րդ կետում առկա «կամ» շաղկապը որոշակի հավասարություն է ստեղծում կոնտակտային անձի և ընտանիքի չափահաս անդամների միջև: Դեռ ավելին, համաձայն Նախագծի 15-րդ հոդվածի 3-րդ մասի կոնտակտային անձը կարող է որոշումներ ընդունել պացիենտի առողջական վիճակի վերաբերյալ: Կոնտակտային անձին և ընտանիքի անդամներին նույն լիազորությունների պատվիրակումը կարող է գործնականում առաջացնել բազմաթիվ խնդիրներ, դառնալ վեճերի և անբարեխիղճ անձնանց կողմից շահադիտական գործողությունների առարկա: Առաջարկվում է վերախմբագրել կոնտակտային անձի սահմանումը, ինչպես նաև պացիենտի նկատմամբ իրավունքների շրջանակը: Նաև հատակ ձևակերպված չէ, թե որտեղ, երբ և ում կողմից է ֆիքսվելու կոնտակտային անձը: Անհրաժեշտ է նաև հստակեցնել պացիենտի և կոնտակտային անցի իրավահարաբերությունները:</p> | <p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է.</p> | <p>Ընդունվել է:</p> |
| <p>Ն. Ջեյնալյան</p> | <p>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»</p> | <p>Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով տրված է բնակչության առողջության պահպանման եւ բարելավման ծրագրեր սահմանումը, որտեղ ՀՀ պետական բյուջեի միջոցների կամ այլ աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրեր ուղղվածությունները բաժանած են «կամ» շաղկապով, ինչը համաձայն Նորմիատիվ իրավական ակտերի մասին Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի նախատեսում է, որ բավական է թվարկված պայմաններից առնվազն մեկի առկայությունը: Իսկ</p> | <p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է.</p> | <p>Ընդունվել է:</p> |

| | | | | |
|---------------------|---|---|--|---------------------|
| | <p>օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0)</p> | <p>պետության քաղաքականության հիմնական նպատակների իրականացմանն ուղղված բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերը միայն մեկ գործառնություն չի սակմանափակվում. առողջության պահպանումն ու ամրապնդումը պահանջում են համալիր միջոցառումների ծրագրերի իրականացում: Առաջարկվում է վերախմբագրել սահմանումը օգտագործելով ստորակետներով բաժանումը:</p> | | |
| <p>Ն. Ջեյնալյան</p> | <p>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0)</p> | <p>Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով «Պացիենտի վարման գործելակարգ»-ի սահմանումը, ինչը, ըստ տվյալ կետի հայեցողական է:</p> <p>Իսկ նախագծի Հոդված 27-ի՝ բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնողների պարտականությունները եւ պատասխանատվությունը, 1-ի մասին 10-րդ կետը հստակ սահմանում է. «ապահովել ընթացակարգերով, պացիենտի վարման գործելակարգերով սահմանված պահանջների կատարման աշխատանքները.» և Նախագծի 30-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը սահմանում է «բուժաշխատողները պարտավոր են կատարել պացիենտի վարման գործելակարգերով եւ ընթացակարգերով սահմանված պահանջները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում.»</p> <p>2-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետը հակասում է 27-րդ հոդվածի, 1-ին մասի 10-րդ կետին և 30-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետին:</p> <p>Առաջարկվում է վերացնել հակասությունները և հստակեցնել սահմանումը:</p> | <p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է.</p> | <p>Ընդունվել է:</p> |
| <p>Ն. Ջեյնալյան</p> | <p>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0)</p> | <p>Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով նախատեսված «բացառությամբ բժշկական օգնության, որն իրականացվում է կլինիկական փորձարկումների շրջանակներում», արտահայտությունը անհասկանալի է, քանի որ կլինիկական փորձարկումները բժշկական օգնության հասկացության մեջ չեն մտնում:</p> | <p>Ընդունվել է ի գիտություն: Կլինիկական փորձարկումները դուրս է բժշկական օգնության և սպասարկման շրջանակից. Դրանց արդյունքները ապացուցողական հենք չունեն և միայն կարող են ընդգրկվել ընթացակարգերի մեջ:</p> | <p>Ընդունվել է:</p> |

| | | | | |
|---------------------|---|--|--|---------------------|
| <p>Ն. Ջեյնալյան</p> | <p>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0)</p> | <p>Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետում ներկայացված « ...առանձին լաբորատորիաներ՝ անկախ մակարդակից...» հասկացությունը անհասկանալի է: Ինչպես է որոշվում լաբորատորիայի մակարդակը: Բացատրության կարիք ունի նաև «ուղղահայաց լաբորատոր ցանց» արտահայտությունը: Սահմանումից կարելի է ենթադրել, որ այդ ցանցի գործունեությունը ֆինանսավորվելու է պետական բյուջեից: Այս հարցը պարզաբանման կարիք ունի:</p> | <p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Ընդ որում, «Ուղղահայաց լաբորատոր ցանցը» միջազգային եզրույթ է, այն առնչվում է ոլորտային լաբորատոր ցանցին: Երկրում կարող են գործել տարբեր ոլորտային ցանցեր (ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի ցանց, տուբերկուլոզի ցանց և այլն), որոնք կարող են համախմբվել որևէ ընդհանուր նպատակի համար ստեղծված համընդհանուր ցանցում: Այդ ցանցում նմուշների հոսքն ուղղված է ուղղահայաց դեպի վեր, ծայրամասային մակարդակից դեպի ազգային, իսկ համակարգումը, ուղղորդումն ու հսկողությունը՝ վերից դեպի վար:</p> | <p>Ընդունվել է:</p> |
| <p>Ն. Ջեյնալյան</p> | <p>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0)</p> | <p>Ըստ Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Համընդհանուր լաբորատոր ցանցի համակարգման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը, սակայն անհասկանալի է, թե ինչպես և ում որոշմամբ են լաբորատորիաները ներգրավվում այդ ցանցում:</p> | <p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:</p> | <p>Ընդունվել է:</p> |

| | | | | |
|--------------|--|---|------------------------------------|--------------|
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱՍ-011/0) | Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրված է հետևյալ կերպ. «շտապ բժշկական, այդ թվում նաև շտապ անհետաձգելի մասնագիտացված բժշկական օգնություն»: Անհասկանալի է «շտապ անհետաձգելի մասնագիտացված բժշկական օգնություն» հասկացությունը: Առաջարկվում է հանել «անհետաձգելի» բառը: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱՍ-011/0) | Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը սահմանում է պալիատիվ (ամոքիչ) բժշկական օգնությունը, ինչը պետք է տեղափոխել հիմնական հասկացությունները սահմանող հոդված: Հավելյալ բացատրության կարիք ունի նաև «հոգևոր խնդիրներ» արտահայտությունը: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱՍ-011/0) | Նախագծի 3-րդ հոդվածի, 2-րդ մասի, 5-րդ կետից հանել «կազմակերպումն» բառը, որովհետև բժշկական օգնությունը և սպասարկումն է իրականացվում ըստ մակարդակների, այլ ոչ բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը: Նույն տրամաբանությամբ Նախագծի 3-րդ հոդվածի, 2-րդ մասի, 6-րդ կետից հանել «կազմակերպման» բառը: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում | Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, թե ում միջև է իրականացվում հեռաբժշկությունը: 1. «...բուժող բժշկի, պացիենտի և հեռաբժշկության միջոցով խորհրդատվություն տրամադրող բժշկի միջև...» արտահայտությունից բխում է, որ հեռաբժշկությունը պարտադիր եռակողմ պետք է իրականացվի: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |

| | | | | |
|--------------|--|--|------------------------------------|--------------|
| | փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Առաջարկվում է մասը վերաձևակերպել այնպես, որ հստակ ֆիքսվի այն հանգամանքը, որ հեռաբժշկություն կարող է լինել կամ երկկողմ, կամ եռակողմ: 2. «Խորհարդատվություն ստացող կազմակերպության» արտահայտությունը փոխարինել «նրա» բառով: | | |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով վերանայվել է առաջնային բժշկական օգնության սահմանվումը, մասնավորապես գործող սահմանման հատման հանվել են «...անվճար...» բառը, ինչպես նաև «...որը երաշխավորվում է պետության կողմից» արտահայտությունը, ինչը հաշվի առնելով ԱԱՊ օղակի առանցքային դերն առողջության ամրապնդման ու պահպանման գործում, կարող է երկարաժամկետ բացասական ազդեցություն ունենալ ԱԱՊ օղակի զարգացման, ինչպես նաև ծառայության մատչելիության վրա: Առաջարկվում է ամրագրել ԱԱՊ ծառայությունների կարևոր դերը և պետության պարտավորությունը և շրջանակը բնակչությանը ԱԱՊ ծառայություններով ապահովելու, ԱԱՊ ծառայությունները զարգացնելու գործընթացում: Առաջարկվում է պահպանել գործող օրենքում առկա ձևակերպումը: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասի «ռեֆերենս լաբորատորիաների» արտահայտությունից հետո ավելացնել «ընտրության և» բառերը, ֆիքսելով նաև, որ ռեֆերենս լաբորատորիաների ընտրության կարգը և սահմանում է ՀՀ կառավարությունը: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն | Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի Առողջապահական բնագավառի տվյալների բազանների սահմանումը տանել հոդված 2 (հիմնական հասկացությունների հոդված): | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |

| | | | | |
|--------------|--|---|--|--------------|
| | կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | | | |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասում «կամ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների» բառերից հետո ավելացնել «կամ ոլորտը վերահսկող տեսչական մարմնի» բառերը՝ ֆիքսելով, որ տվյալների բազաները կարող են մշակվել նաև Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից : | Չի ընդունվել: Քանի որ Տեսչական մարմինը չի հանդիսանում անձնական տվյալ մշակող, այլ հանդիսանում է անձնական տվյալ վերլուծող, ուստի վերջինիս հարցման հիման վրա կտրամադրվեն ապաանձնավորված տվյալներ: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | 1. Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «առողջական վիճակին վերաբերող» բառերը, քանի որ հատուկ կատեգորիայի անձնական տվյալների մեջ արդեն իսկ մտնում են առողջական վիճակին վերաբերող տվյալներ. 2. «հատուկ կատեգորիայի» բառերից հետո ավելացնել «անձնական» բառը: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Նախագծի 44-րդ հոդվածով բժշկական օգնության և սպասարկման նկատմամբ վերահսկողությունը վերապահվում է Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին, բայց առողջապահական համակարգի տվյալների բազային մուտքի և մշակման հնարավորություն չի ընձեռնվում, ինչը անտրամաբանական է: Նախագծի 6-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 3-րդ կետով. «3) ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից վարվող առողջապահության բազավառի տվյալների բազաները՝ | Չի ընդունվել: Քանի որ Տեսչական մարմինը չի հանդիսանում անձնական տվյալ մշակող, այլ հանդիսանում է անձնական տվյալ վերլուծող, ուստի վերջինիս հարցման հիման վրա կտրամադրվեն ապաանձնավորված տվյալներ: | Ընդունվել է: |

| | | | | |
|--------------|---|---|--|--------------|
| | | <p>ա. օրենքով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացման, այդ թվում՝ բնակչության առողջության պահպանման և բարելավման, հիվանդությունների կանխարգելման, սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման,</p> <p>բ. վարակիչ, զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների տարածման կանխման և վերացման, ինչպես նաև տարածման պատճառների ու պայմանների բացահայտման (հայտնաբերման),</p> <p>գ. սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային կանխարգելիչ միջոցառումների կազմակերպման,</p> <p>դ. աշխատողների առողջության և անվտանգության ապահովման նպատակներով»:</p> | | |
| Ն. Ջեյնալյան | <p>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0)</p> | <p>Նախագծի 7-րդ հոդվածում առաջարկվում է հիմնական սկզբունքներում նախատեսել հստակ ձևակերպում, որ մարդու ցանկացած շփում առողջապահության բնագավառի հետ, անկախ այն հանգամանքից, թե այդ ծառայությունները մատուցվել են պետական պատվերի, սոցիալական փաթեթի, վճարովի և այլ վճարման սկզբունքներով պետք է արտացոլված լինեն էլեկտրոնային առողջապահության համակարգում:</p> <p>Նման կարգավորումն ունի երկու հիմնական նպատակ՝ դուրս բերել հնարավոր սովերից առողջապահության ծառայությունները, աջակցել ՀՀ Կառավարության հակակոռուպցիոն ծրագրերին, ինչպես նաև ձևավորել քաղաքացու ամբողջ կյանքի այսպես կոչված առողջության անձնագիր՝ նպաստելով վերջինի առողջության պահպանման արդյունավետության բարձրացմանը:</p> | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | <p>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0)</p> | <ol style="list-style-type: none"> 1. Արդյունավետության և միասնական տվյալների շտեմարան ունենալու նպատակով առավել շահեկան է տվյալների բոլոր բազաները, ռեգիստրները և ռեեստրները միավորել մեկ վայրում՝ միասնական էլեկտրոնային առողջապահության համակարգում, Առաջարկվում է նախագծի 8-րդ հոդվածի (բուժաշխատողների ռեգիստր) դրույթը տեղափոխել 7-րդ հոդված: 2. Հոդվածում առաջարկվում է ավելացնել նաև տվյալների ուսումնասիրում և վերլուծություն հասկացությունները: 3. հստակեցնել տվյալների փոխանցման հիմքերը: | 1. Ընդունվել է մասնակի: Ընդունելի է միայն այն համակարգերի համար (բազաներ, ռեգիստրներ և ռեեստրներ) որոնք հավաքում, պահպանում և մշակում են մարդու վերաբերյալ առողջապահական տվյալներ: Այլապես այն հակասում է էլեկտրոնային | Ընդունվել է: |

| | | | | |
|--|--|--|--|--|
| | | | <p>առողջապահության համակարգի սահմանմանը: Տեխնիկական տեսանկյունից անգամ այս մոտեցումը շատ խնդրահարույց է, քանի որ ենթադրում է տարբեր բնույթի և տարբեր օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով կարգավորվող համակարգերի՝ մեկ համակարգի մեջ կենտրոնացնելու նպատակ: Օրինակ, բժշկական հաստատությունների լիցենզավորման համակարգը գործում է մի իրավական դաշտում, գրանցված դեղերի ռեգիստրը մեկ այլ դաշտում, բժշկական կադրերի ռեգիստրը պետք է մշակի բժշկական անձնակազմի և այդ անձնակազմի լիցենզավորման մասին տեղեկատվությունը, ծնունդների և մահերի հաշվառման բազաները գործում են արդարադատության ոլորտի կարգավորումներով: Միաժամանակ, համակարգի արդյունավետության նպատակով անհրաժեշտ ռեգիստրները կարող են ինտեգրվել:</p> <p>2. Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է</p> <p>3. Կկարգավորվի ենթաօրենսդրական ակտով /հոդված 8, մաս 2/</p> | |
|--|--|--|--|--|

| | | | | |
|--------------|--|--|--|--------------|
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Նախագծի 7-րդ հոդվածի, 2-րդ մասի 3-րդ կետի «իրավասու օգտագործողներ» արտահայտությունը պարզաբանման կարիք ունի: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Նախագծի 7-րդ հոդվածի, 2-րդ մասի 4-րդ կետի ձևակերպումից կարելի է ենթադրել, որ օրենքը ուժի մեջ մտնելուց հետո պետք է անցկացվի նոր մրցույթ էլեկտրոնային առողջապահության համակարգի նոր օպերատոր ընտրելու համար, որի չափանիշները պետք է սահմանի ՀՀ կառավարությունը: Կետը պարզաբանման կարիք ունի: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Նախագծի անցումային դրույթներում նորմ է նախատեսվել, ըստ որի՝ էլեկտրոնային առողջապահության համակարգի միասնական օպերատորի մրցույթ կարող է կայանալ մինչև սույն օրենքի ընդունումը կնքված պայմանագրի ժամկետը լրանալու կամ պայմանագրով նախատեսված հիմքերով պայմանագիրը լուծելու դեպքում: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Նախագծի 7-րդ հոդվածի 8-րդ մասը («էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով հավաքագրված էլեկտրոնային տեղեկատվությունը կարող է կիրառվել անձի վերաբերյալ բժշկական մանրակրկիտ տեղեկատվություն ստանալու եւ համապատասխան բժշկական ծառայությունների մատուցման համար, բժշկական ծառայությունների դիմաց փոխհատուցումներ կատարելիս, ուսումնասիրությունների, վերլուծությունների, մշտադիտարկումների նպատակով:») շարադրել նոր խմբագրությամբ. («էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով հավաքագրված էլեկտրոնային տեղեկատվությունը կարող է կիրառվել անձի վերաբերյալ բժշկական մանրակրկիտ տեղեկատվություն ստանալու եւ համապատասխան բժշկական ծառայությունների | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |

| | | | | |
|--------------|--|--|---|--------------|
| | | մատուցման համար, բժշկական ծառայությունների դիմաց փոխհատուցումներ կատարելիս, իսկ տվյալների ապանձնավորված լինելու պարագայում՝ նաև ուսումնասիրությունների, վերլուծությունների, մշտադիտարկումների նպատակով:» Ընթացիկ շարադրումից բխում է, որ անձնական տվյալները կարող են կիրառվել ուսումնասիրությունների, վերլուծությունների և մշտադիտարկումների նպատակով: | | |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱՍ-011/0) | Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված բժշկական գաղտնիքի սահմանումը տեղափոխել 2-րդ հոդված (հիմնական հասկացություններ): | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱՍ-011/0) | Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասը («Բժշկական գաղտնիք չեն համարվում սույն հոդվածի 1-ին մասում նշված անանուն տվյալները: Անանուն տվյալները չեն կարող ներառել որևէ տվյալ, որով հնարավոր կլինի ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը:») շարադրել նոր խմբագրությամբ. «Բժշկական գաղտնիք չեն համարվում ապանձնավորված տվյալները, որոնց միջոցով հնարավոր չի լինի ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը: Ապանձնավորված տվյալները կարող են օգտագործվել գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնողներին»: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» | Նախագծի 9-րդ հոդվածի 4-րդ մասում «ուղղակիորեն նախատեսված» բառերը փոխարինել «սահմանված» բառով: | Չի ընդունվել: Նախագիծը համապատասխանեցված է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի դրույթներին: | Ընդունվել է: |

| | | | | |
|---------------------|---|---|---|---------------------|
| | <p>օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0)</p> | | | |
| <p>Ն. Ջեյնալյան</p> | <p>«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0)</p> | <p>Խնդրահարույց է նաև այն, որ մի կողմից օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 6-րդ մասով բժշկական գաղտնիք համարվող տվյալներն առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության կարող են փոխանցվել գիտական կամ գիտատեխնիկական գործունեության իրականացնողներին, մյուս կողմից օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գիտնականները և գիտական աշխատողներն իրավունք ունեն առողջապահության բնագավառում գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնելու նպատակով բժշկական փաստաթղթեր հետազոտել (մշակել) միայն դրանց միջոցով անձին նույնականացնելու հնարավորությունը բացառող միջոցներ կիրառելու դեպքում, իսկ եթե բժշկական (այդ թվում և էլեկտրոնային) փաստաթղթերում անձի նույնականացումը բացառող միջոցների կիրառումը թույլ չի տալիս հասնել տվյալ գիտական կամ գիտատեխնիկական գործունեության իրականացման նպատակներին կամ բժշկական փաստաթղթերում անձի նույնականացումը բացառող միջոցների կիրառումը անհնար է տեխնիկական պատճառներով, ապա անձնական, ներառյալ հատուկ կատեգորիայի տվյալներ պարունակող բժշկական փաստաթղթերի հետազոտման (մշակման) միջոցով գիտական կամ գիտատեխնիկական գործունեություն կարող է իրականացվել առանց անձի համաձայնության միայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով: Ընդ որում, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը վերաբերում է անձնական տվյալները մշակելու վերաբերյալ լիազոր մարմնին ծանուցելուն: Այդ առումով հստակ պարզ չէ, թե ինչ կարգավորում է նախատեսվում: Այս դեպքում նույնպես առկա է իրավական անորոշություն՝ հաշվի առնելով, որ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը առանց անձի համաձայնության անձնական տվյալների մշակման կարգ չի նախատեսում:</p> | <p>Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է:</p> | <p>Ընդունվել է:</p> |

| | | | | |
|--------------|--|--|---|--------------|
| | | Անհրաժեշտ է հստակեցնել նախագծի 9-րդ հոդվածի 6-րդ մասի անձնական տվյալներն այլ մարմիններին փոխանցելու ձևը և կարգը: | | |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Նախագծի 9-րդ հոդվածի 6-րդ մասի 8-րդ կետը (Բժշկական գաղտնիք համարվող տվյալները առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության, կարող են փոխանցվել միայն սույն օրենքով նախատեսված դեպքերում գիտական կամ գիտատեխնիկական գործունեության իրականացնողներին) հանել, քանի որ գիտական կամ գիտատեխնիկական գործունեության համար կարող են օգտագործվել միայն ապանձնավորված տվյալները : Միաժամանակ նշված կետը հակասում է նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասին, ըստ որի գիտնականները և գիտական աշխատողները կարող են ուսումնասիրել միայն ապանձնավորված տվյալներ: | Չի ընդունվել: Նշված հոդվածների հակասություն առկա չէ: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Նախագծի 9-րդ հոդվածի 6-րդ մասի 9-րդ կետից հանել «բռնի, ներառյալ» բառերը, քանի որ «բռնի»-ն արդեն իսկ համարվում է հակաօրինական գործողություն: | Չի ընդունվել: Առանձին դեպքերում բռնի գործողությունը կարող է հակաօրինական գործողություն չդիտարկվել, օրինակ՝ ինքնասպանությունը կամ ինքնավնասումը: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | խնդրահարույց է նախագծի 9-րդ հոդվածի 6-րդ մասի 10-րդ կետը, ըստ որի հետաքննության մարմինն (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմին), քննիչին, դատախազին, դատարանին բժշկական գաղտնիք համարվող տվյալները կարող է տրամադրվել միայն գրավոր հարցում ներկայացնելով : Գրավոր հարցումներն ինքնին բավարար չեն տեղեկություններ տրամադրելու համար, այլ անհրաժեշտ է պատճառաբանված որոշում: Առաջարկվում է «գրավոր հարցումների» բառերը փոխարինել «պատճառաբանված որոշումների» բառերով: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |

| | | | | |
|--------------|--|---|--|--------------|
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ մասում նշված է, որ բժշկական փաստաթղթերի հետ ծանոթանալը կամ պատճենահանումը կամ քաղվածք կատարելը պետք է բացառվի իրավասություն չունեցող անձանց կողմից: Հստակ չէ այն անձանց շրջանակը, ով դրա իրավասությունը ունի: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Հաշվի առնելով, որ ինչպես ներկայումս, այնպես էլ համընդհանուր առողջության ապահովագրության համակարգի ներդրման համար անհրաժեշտ բժշկական օգնության և սպասարկման կանոնակարգման անհրաժեշտությունը՝ նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը առաջարկվում է վերաշարադրել հետևյալ կերպ՝ « ընտրել բժշկական օգնություն եւ սպասարկում իրականացնողին եւ բուժաշխատողին՝ վերջինի համաձայնությամբ : ՀՀ պետական բյուջեի հաշվին կամ համապարփակ առողջության ապահովագրությամբ իրականացվող բնակչության առողջության պահպանման եւ բարելավման ծրագրեր շրջանակներում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի ընտրության կարգը հաստատում է կառավարությունը:» | Չի ընդունվել: Առաջարկի չընդունումը պայմանավորված է այն հանգամանքով, որ բուժաշխատողը իր մասնագիտության բովանդակությունից ելնելով՝ պարտավոր է բուժօգնություն և սպասարկում տրամադրել ցանկացած պացիենտի, իսկ իր համաձայնության անկայությունն օրենքով ամրագրելու դեպքում վերջինս կարող է հրաժարվել օրինակ որոշակի խմբի պացենտներից /օրինակ ՄԻԱՎ/ՁԻԱՎ-ով հիվանդ անձանց դեպքում/: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ- | 1. Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «հրաժարվել» բառից առաջ ավելացնել «գրավոր» բառը, քանի որ բուժօգնությունից հրաժարվելու փաստը պետք է ֆիքսվի հետագա հնարավոր իրավական խնդիրներից խուսափելու համար: 2. Կետի վերջում ֆիքսել, թե բացառությամբ օրենքի որ հոդվածի, որ կետով նախատեսված դեպքերի անձը չի կարող հրաժարվել: 3. Բուժօգնությունից հրաժարվելու փաստը ֆիքսելու համար լիազոր մարմնի կողմից մշակել ձևաթուղթ, եթե հրաժարումը ֆիքսվում է թղթային տարբերակով: | 1-3. Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |

| | | | | |
|--------------|--|---|---|--------------|
| | 011/0) | | | |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱՍ-011/0) | Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը պացիենտին իրավունք է տալիս «տեղեկացված չլինել, եթե գրավոր կարգով միանշանակ եւ հստակ հայտնել է այդ ցանկությունը»: Նման իրավունքի իրագործումը կարող է պացիենտի հետագա բուժման վերաբերյալ որոշումների ընդունման պատասխանատվությունը տեղափոխել ավագ բուժաշխատողի դաշտ՝ հետագայում առաջացնելով զանազան իրավական բարդություններ, քանի որ նույն Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ «Մարդու համաձայնությունը բժշկական միջամտության համար անհրաժեշտ պայման է, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:», ինչ հակասում է նաև 24-րդ հոդվածի 2-րդ մասին: «Բժշկական միջամտությունից հրաժարվելու փաստը՝ հնարավոր հետևանքների նշումով, գրանցվում է բժշկական փաստաթղթերում եւ հավաստվում պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից»: Նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և 15-րդ հոդվածի 1-ին մասի միաժամանակյա առկայությունը կարող են հանգեցնել բուժօգնություն տրամադրելու անհնարինությանը: Առաջարկվում է ամբողջությամբ վերանայել 12-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, և հստակեցնել «տեղեկացված չլինել» ինչի մասին: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: /Նախագծի 13-րդ հոդվածի 1-ին մասի 11-12-րդ կետեր/ | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱՍ-011/0) | Նախագծի 12-րդ հոդվածի անունը չի համապատասխանում հոդվածի մասերին: Հոդվածի անունը վերաշարադրել: | Չի ընդունվել: Հոդվածում թվարկված են պացիենտի իրավունքները և հոդվածի վերնագիրը համապատասխանեցված է վերջինիս բովանդակությանը: | Ընդունվել է: |

| | | | | |
|--------------|--|---|---|--------------|
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Նախագծի 13-րդ հոդվածի դրույթը տեղափոխել 12-րդ հոդված, քանի որ այն 12-րդ հոդվածի տրամաբանության սահմաններում է: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: Նախագծի 13-րդ հոդվածը միավորվել է 13-րդ հոդվածի հետ՝ դառնալով 13-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետ: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասը տեղափոխել 12-րդ հոդված, քանի որ այն 12-րդ հոդվածի տրամաբանության սահմաններում է: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱԱ-011/0) | Ըստ Նախագծի 14-րդ հոդվածի 2-ին մասի («Օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի (պացիենտի) վերաբերյալ՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունները տրամադրվում են նրա օրինական ներկայացուցչին:») անգործունակ ճանաչված անձի (պացիենտի) վերաբերյալ անձի բժշկական գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը պետք է տրամադրվի միայն նրա օրինական ներկայացուցչին: Անհասկանալի է տվյալ դեպքում կոնտակտային անձի դերը տվյալ իրավիճակում, քանի որ կոնտակտային անձի սահմանման մեջ նշվում է, որ անգիտակից, և ըստ էության անգործունակ անձի բժշկական տվյալները փոխանցվում են կոնտակտային անձին: Այս հոդվածը հակասում է նաև 15-րդ հոդվածի 3-րդ մասին («Իսկ այն դեպքերում, երբ պացիենտի վիճակը թույլ չի տալիս արտահայտել իր կամքը, բժշկական միջամտության համար համաձայնությունը տրվում է նրա օրինական ներկայացուցչի կամ | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է /հոդված 14, մաս 2/: | Ընդունվել է: |

| | | | | |
|--------------|--|--|------------------------------------|--------------|
| | | կոնտակտային անձի կողմից: »): Առաջարկվում է վերացնել հողվածների մասերը հակասությունները: | | |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱՍ-011/0) | Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասում («Մարդու համաձայնությունը բժշկական միջամտության համար անհրաժեշտ պայման է, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:») «մարդու» բառից հետո ավելացնել «գրավոր» բառը: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |
| Ն. Ջեյնալյան | «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-331-29.10.2019-ԱՍ-011/0) | Նախագծի 15-րդ հոդվածի 1-ին մասի բացառության մեջ ֆիքսել, թե որ հոդվածի, որ մասին է վերաբերում բացառությունը: | Ընդունվել է: Նախագիծը խմբագրվել է: | Ընդունվել է: |
